ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԳՄՄՆ Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Նախադասության կազմության և գլխավոր անդամների դասավանդումը 2-3-րդ դասարաններում:

Կատարող՝ Տոնոյան Արմենուհի Մերուժանի

Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց , դասվար

Ղեկավար՝ Անահիտ Փարկիթյան

Բովանդակություն

1.Ներածություն.....3

Գլուխ 1.Գաղափար նախադասության մասին 5

Գլուխ 2. Նախադասության կազմության և անդամների դասավանդումը.....8

2.2 Նախադասության գլխավոր և երկրորդական անդամների դասավանդումը…..9

2.3.Նախադասության գլխավոր անդամների դասավանդումը……..…..14

Եզրակացություն.....19

Օգտագործված գրականության ցանկ.....20

Ներածություն

Մայրենի լեզվի տարրական դասընթացի խնդիրը կրտսեր դպրոցականների լեզվամտածողության ու տրամաբանության, մտածելակերպի, ուսումնառության և համագործակցային տարրական կարողությունների, համակեցության պարզ ունակությունների ձևավորումն է և համամարդկային արժեքների դաստիարակությունը: Հայտնի է, որ տարրական դասարաններում մայրենիի դասավանդումը իրականացվում է միասնացված ուսուցման եղանակով, ինչը իրականացվում է ընթերցանության և դրա վրա մատուցվող լեզվական գիտելիքների համադրությամբ: Սա հնարավորություն է ընձեռում լեզվական հասկացությունները մատուցել ոչ իբրև քերականական նյութ՝ հենվելով սահմանումների ու կանոնների վրա, այլ դիտարկել դրանք գործնական ճանապարհով՝ գեղարվեստական ստեղծագործությունների համատեքստում՝ ապահովելով դրանց ճանաչողական-կիրառական արժեքը:

Տարրական դպրոցի մայրենիի պետական ծրագրի և չափորոշչի համաձայն[1] կրտսեր դպրոցականը լեզվական տարրական գիտելիքներ է ստանում լեզվի գրեթե բոլոր բաժինների վերաբերյալ՝ հնչյունաբանություն, բառագիտություն, քերականություն:

Ըստ հանրակրթության պետական չափորոշչի՝ «տարրական դպրոցի հիմնական նպատակը մտավոր և ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության, տրամաբանական հիմքերի և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումն է: Տարրական դպրոցն ապահովում է ուսումնառության անհրաժեշտ պայմաններ և հիմնական դպրոցում ուսուցումը շարունակելու համար պահանջվող մակարդակ»[3]:

Մայրենիի ուսուցումը տարրական դպրոցում ունի զուտ գործնական բնույթ, և աշակերտի ստացած լեզվական գիտելիքները ուղղորդվում են մի գլխավոր նպատակի՝ հաղորդակցություն ապահովելու, կապակցված խոսք կառուցելու

1.3Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2021 :

վերջնառդյունքին:

Աշակերտներին խոսել սովորեցնելու, գրավոր և բանավոր մտքերը շարադրելու, տեղեկույթ փոխանցելու և ստանալու հմտությունների և ունակությունների պատվաստման և զարգացման գործում անգնահատելի է շարահյուսական գիտելիքների դերը: Ահա թե ինչու տարրական դպրոցի մայրենիի դասընթացի գերակշիռ մասը նվիրվում է նախադասության և խոսքի ուսումնասիրությանը, որով զբաղվում է շարահյուսությունը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության «Կրթության մասին օրենքի» պահանջներով, ըստ որի դպրոցի առարկայական դասընթացի, մասնավորապես մայրենիի ուսուցումը նպատակաուղղված է սովորողի հոգևոր աշխարհի հարստացմանը, անձի ձևավորմանը:

Հետազոտության նպատակն է մշակել «Նախադասություն» թեմայի ուսուցման մեթոդական համակարգ՝ համադրելով այս բնագավառում առկա ավանդական և նորագույն մեթոդների ընձեռած հնարավորությունները: Ըստ այդմ՝ տարրական դպրոցի սովորողը պետք է կարողանա՝

1.ճանաչել նախադասությունը՝ ելնելով այն բնորոշող առանձնահատկություններից,

2.զանազանել գլխավոր և երկրորդական անդամները ըստ նախադասության մեջ ունեցած նրանց դերի և կարևորության,

3.հարստացնել ակտիվ բառապաշարը,

4.հղկել գրավոր և բանավոր լեզվի ոճական կառուցվածքը:

Հետազոտության առարկան տարրական դպրոցի 1-4-րդ դասարաններում «Նախադասություն» թեմայի ուսուցման գործընթացն է:

Հետազոտության համար **մեթոդական հիմք են** ծառայել հայ դասական և ժամանակակից լեզվաբանների, մանկավարժների, հոգեբանների, հայոց լեզվի և տարրական ուսուցման մեթոդիկայի այն դրույթների, որոնք դիտարկվում են նշված գիտությունների կողմից (Ա.Բահաթրյան, Ս. Մանդինյան, Ղ. Աղայան, Գ. Էդիլյան, Ա. Տեր-Գրիգորյան, Ջ. Գյուլամիրյան և այլք):

ՈՒսուցման հաջողությունը դպրոցում կախված է բազմաթիվ գործոններից, այդ թվում՝ ուսուցման եղանակներից, մեթոդներից, դիդակտիկայի մանկավարժական սկզբունքներից:

Հենվելով ուսուցման մեթոդների դասակարգման բազմաթիվ տարբերակների վրա՝ մենք մշակել ենք ուսուցման մեթոդների այնպիսի համակարգ, որտեղ համատեղված են ավանդական և ժամանակակից մեթոդ-հնարները: Մեր կողմից փորձարկվել են մեթոդների հետևյալ խմբերը՝

-ուսուցողական տեսական-տեղեկատվական (շարադրում, զրույց, պատմում, բացատրում),

-ուսուցման պրակտիկ-գործողության մեթոդներ (վարժություններ, առաջադրանքներ, լեզվական խաղեր),

-ուսուցման որոնողական-ստեղծագործական կամ փոխգործուն մեթոդներ (ԽԻԿ համակարգ, «Մտագրոհ», «Վենի դիագրամ», «Խառնված հերթականություն», «Բազմաբնույթ մտածողություն», «Խմբավորում», «Վերլուծական-համադրական»):

Հետազոտության անցկացման փուլերը: Հետազոտությունն անցկացվել է երեք փուլերով: Առաջին փուլում կատարվել է հիմնախնդրի վերաբերյալ մանկավարժական-մեթոդական, լեզվաբանական գրականության առանձնացում, վերլուծություն և տեսական իմաստավորում: Արդյունքում սահմանվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, ընտրվել են տեսական և փորձարարական մեթոդները:Երկրորդ փուլում կատարվել են հետազոտության ծրագրի, մեթոդիկայի մշակման աշխատանքները:Երրորդ փուլում ներառվել են փորձարարական աշխատանքները, որի ընթացքում ընդհանրացվել են գիտափորձի արդյունքները, ձևակերպվել են եզրակացությունները, վերջնականորեն շարադրվել է աշխատանքը:

Հետազոտական աշխատանքի ծավալը և կառուցվածքը:

Հետազոտությունը կազմված է ներածությունից, երկու գլուխներից՝ իրենց ենթաթեմաներով, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Այն կազմում է համակարգչային շարվածքով 20 էջ:

Գլուխ առաջին

Գաղափար նախադասության մասին

Նախադասությունը՝ որպես լեզվական միավոր, ուսումնասիրվել է մի շարք քերականների կողմից, ինչպիսիք են Մ.Աբեղյանը, Գարեգինյանը, Խ. Բաղիկյանը, Վ. Եզեկյանը, Յու. Ավետիսյանը և այլք: Նախադասության սահմանումը և հիմնավորումը ըստ էության գրեթե նույն ձևակերպումն ունի հիշյալ լեզվաբանների կողմից:

«Նախադասությունը ստորոգումով և հնչերանգային ավարտվածությամբ ձևավորված լեզվական նվազագույն միավոր է, որով հաղորդվում է թե՛ միտք, թե՛ խոսողի վերաբերմունքը»[1]:

«Բառերի այն կապակցությունը, որն արտահայտում է ամբողջական միտք և ունի հաղորդակցական արժեք, կոչվում է նախադասություն»[2]:

«Նախադասությունը ստորոգումով, հնչերանգային ավարտվածությամբ և բառերի կանոնավոր դասավորությամբ ձևավորված միտք արտահայտող լեզվական հաղորդակցման նվազագույն միավոր է»[3]:

«Այն բառը կամ բառերի քերականական կապակցությունը, որ արտահայտում է միտք կամ հույզ, կոչվում է նախադասություն»[1]:

ՈՒսումնական գործունեության առաջին իսկ օրվանից նախադասություններ կազմելու և դրանք կապակցված խոսքում օգտագործելու կարողությունների ձևավորումը հայոց լեզվի դասի գլխավոր խնդիրներից մեկն է: Ուսուցչի մասնագիտական կարողությունների կարևոր մասն են կազմում բազմազան մեթոդների իմացությունը, դրանք կիրառելու, համադրելու հմտությունը: Հասարակության զարգացման ներկա փուլում կրթության առջև դրված նոր խնդիրներն ու հեռանկարային զարգացումները պահանջում են ուսուցման գործընթացում նոր մեթոդների կիրառման անհրաժեշտություն:

Պայմանականորեն ուսուցման մեթոդներն այսօր երկու խումբ են կազմում՝

1.Ա. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, «Լույս», 1975, էջ 265:

2. Հովհաննես Բարսեղյան, Հայոց լեզու (դասագիրք 8-րդ դասարանի համար), Երևան, 2012, էջ 61:

3.Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 2008, էջ 32:

ավանդական և նոր կամ ժամանակակից մեթոդներ:

Դեռևս գրաճանաչության նախապայբբենական շրջանում աշակերտները նախադասության մասին գաղափար են կազմում գծապատկերների միջոցով: Նախագրային շրջանում երեխաները վարժվում են խոսքից (պատմությունից) առանձնացնել նախադասություն, նկարագրությունից՝ բառ, բառերը վանկատել և ենթարկել հնչյունային վերլուծության, իմանում են, թե ինչ է գծապատկերը: Երեխաները սովորում են անվանել նկարում պատկերված առարկաները, կազմել նախադասություններ ըստ նկարների, հորինել պատմություններ, «կարդալ» նկարաշարեր, նախադասություններն ու բառերը ներկայացնել գծապատկերներով: Այս ամենը կատարվում է երեխաների համար հոգեհարազատ այն միջավայրում, որը ստեղծում է դասագիրքը իր գունագեղությամբ, առաջադրանքների հետաքրքրաշարժությամբ, նյութի մատուցման խաղային հնարքներով: Եվ նախադասության սահմանմանը գիտակցորեն հանգելու համար մենք կարևորում ենք **նախադասությունը միտք է արտահայտում** դատողության իմաստը երեխաների գիտակցությանը հասցնելը: Մի շարք դասարաններում փորձարարական աշխատանքներ իրականացնելիս եկել ենք այն եզրակացության, որ երեխաները անգիր արտասանում են նախադասության սահմանումը, առանց հասկանալու թե ինչ է միտքը: Դրա համար ճիշտ ենք համարում առաջին հերթին երեխաների գիտակցությանը հասցնել **միտք** բառի էությունը: Եվ դա սկսում ենք ոչ թե միտք բառի իմաստի բացատրությամբ, այլ դեռևս նախապայբբենական շրջանում նկարների շուրջ նախադասություններ կազմելով, պատմություններից, խոսքից նախադասություններն առանձնացնելով: Այս շրջանում երեխաները սովորում են նկարների շուրջ նախադասություններ կազմել: Սկզբում առաջարկում ենք այնպիսի նկարներ, որտեղ պատկերված են մեկ գործողություն կատարող առարկաներ, մարդիկ և այլն:

Օրինակ, պարող աղջիկ, նվագող կենդանիներ, վերնաշապիկ կարող տատիկ, օդում սավառնող ինքնաթիռ և այլն:

Բացատրվում է, որ խոսքը պարունակում է առանձին մտքեր:

Եթե խոսողը քիչ բան ունի ասելու, նրա խոսքը կարճ է լինում: Ամենակարճ խոսքը մեկ առանձին միտք է:

Օրինակ՝ Աշխատողը սոված չի մնա:

Միտքը արտահայտվում է բառերով: Ուսուցիչը երեխաների օգնությամբ տալիս է սահմանումը:

Բառերով արտահայտված յուրաքանչյուր առանձին միտք կոչվում է **նախադասություն** :

«Աշխատողը սոված չի մնա» մեկ նախադասություն է: Դեռևս նախաայբբենական շրջանում երեխաներին սովորեցնում ենք, որ յուրաքանչյուր նոր նախադասություն սկսվում է մեծատառով: Յուրաքանչյուր նախադասության վերջում դրվում է վերջակետ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ

Նախադասության մասին ընդհանուր գաղափար տալուց հետո պետք է երեխաներին ծանոթացնել նաև նախադասության կազմությանը, նրա գլխավոր և երկրորդական անդամներին, որպեսզի նախադասության ճանաչումն ավելի հիմնավոր ու բազմակողմանի դառնա: Կառուցվածքի տեսակետից նախադասությունները կարող են նման կամ տարբեր լինել: Դա առաջին հերթին կախված է նախադասության մեջ ընդգրկված կամ նրա կազմի մեջ մտնող բառերի քանակից: Այդ բառերը նախադասության մեջ կատարում են տարբեր պաշտոններ, նախադասության տարբեր անդամներ են:

Երկրորդ դասարանի **«Մեր բարեկամ կենդանիները»** թեմայի մուտքի հետ կապված թեմատիկ պլանով նախատեսվում է նախնական պատկերացում տալ նախադասության անդամների մասին: Այս նպատակով առաջադրվում է կատարել հետևյալ առաջադրանքը (առ.2, էջ110)[1]:

2.Ես ապրում եմ այս տանը:

Իմ ընտանիքի անդամներն են.

ես, ապրում, եմ, այս, տանը բառերը:

Հիշո՞ւմ եք, թե ով եմ ես: Քանի՞ անդամ կա իմ ընտանիքում:

Երեխաները պատասխանում են, որ դա նախադասությունն է: Վերհիշում են նախադասության սահմանումը, այնուհետև հաշվում նախադասության մեջ օգտագործված բառերի՝ անդամների քանակը:

2.2 ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԵՎ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ

Նախադասության մասին հաջորդ գիտելիքը պետք է լինի նախադասության անդամների մեջ որոշակի տարբերակում մտցնելը և դրանք ըստ հիմնական կամ գլխավոր և երկրորդական անդամների տարաբաժանելը: Առաջինները պետք է ընկալվեն որպես այնպիսի անդամներ՝ առանց որոնց նախադասություն կազմվել չի կարող, իսկ երկրորդները՝ որպես այնպիսի անդամներ, առանց որոնց կարող է նախադասություն կազմվել: Երբեմն այն խիստ համառոտ, հակիրճ ու աղքատ կլինի, սակայն որպես նախադասություն կարող է ճանաչվել, որովհետև կհասկացվի, թե ինչի մասին է նրանում խոսվում, ինչ միտք է արտահայտում այն: Նախադասության անդամների այդ հիմնական տարբերակումը երեխաների գիտակցությանը հասցնելու համար պետք է դիմել նախադասության անդամները միմյանց հետ համեմատելու և հակադրելու և կամ նախադասությունները համառոտելու և ընդարձակելու մեթոդական հնարներ: Սա հնարավորություն կտա նախադասության անդամների մեջ որոշակի տարբերակում մտցնել, դրանք ճանաչել ու գնահատել ըստ նախադասության մեջ կատարած պաշտոնի ու այդ պաշտոնի կարևորության: Այդ նպատակով անհրաժեշտ կլինի վերցնել որևէ պարզ ընդարձակ նախադասություն և յուրաքանչյուր անդամը հանելու կամ բաց թողնելու և դատողությամբ նախադասության մեջ նրա տեղն ու

կարևորությունը որոշելու միջոցով պարզել նրա գլխավոր կամ երկրորդական անդամ լինելը:

Ներկայացնենք դասի օրինակ:

Դասի թեման- «Բժիշկ Այբոլիտն ու նրա գազանները», Նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ

Դասի նպատակները-ա)ուսուցողական՝

- կամրակայեն նախադասության անդամների միասին ունեցած գիտելիքները,
- գաղափար կկազմեն նախադասության գլխավոր և երկրորդական անդամների մասին:

բ)դաստիարակչական՝

- կդրսևորեն հարգալից վերաբերմունք բժշկի, նրա կատարած գործի նկատմամբ

Դասի ընթացքը- Խթանում: «Խմբավորում»:

Խմբավորում մեթոդի միջոցով բացահայտել աշակերտների մտքում **բժիշկ** բառի առաջացրած զուգորդումները:



Բժիշկ բառով երեխաները կազմում են նախադասություններ և դրանցից որևէ մեկը գրում գրատախտակին: Օրինակ՝ Բարի բժիշկը բուժում էր գազաններին: Այնուհետև երեխաները հաշվում են, թե քանի անդամ ունի տվյալ նախադասությունը:

Իմաստի ընկալման փուլ: «Վերլուծական-համադրական» մեթոդ:

Մեկական բառ հանում ենք նախադասությունից:

1. Բժիշկը բուժում էր գազաններին:

2. Բարի բուժում էր գազաններին:
3. Բարի բժիշկը բուժում էր:
4. Բարի բժիշկը էր գազաններին:

Այսպիսով՝ **բարի** բառը հանելով՝ պարզում ենք, որ նախադասությունը առանց այդ անդամի կարող է գոյություն ունենալ և ամբողջական ու ամփոփ միտք արտահայտել: Դա ցույց է տալիս, որ այդ բառը նախադասության համար գլխավոր անդամ չէ, իսկ եթե գլխավոր չէ, ուրեմն երկրորդական է: **Բժիշկ** բառը հանելով և նախադասությունը

վերստին կարդալով ու քննարկելով՝ պարզում ենք, որ այդ վիճակում նախադասությունը շատ թերի է, որովհետև պարզ չէ, թե ով է բուժել գազաններին: Դրանից հետո դժվար չէ եզրակացնել, որ **բժիշկը** այդ նախադասության համար գլխավոր անդամ է: Վերցրած նախադասության վերլուծությունն այդ ձևով մինչև վերջ հասցնելով՝ հեշտությամբ պարզում ենք, որ **«բժիշկը**, **բուժում էր»** անդամներն այս նախադասության համար գլխավոր անդամներ են, իսկ **բարի** և **գազաններին** անդամները՝ երկրորդական:

Այսքանից հետո երեխաները եզրակացնում են և տալիս սահմանումը:

Նախադասության կարևոր, անհրաժեշտ անդամները կոչվում են նախադասության գլխավոր անդամներ:

Նախադասության կազմի մեջ մտնող մյուս բոլոր անդամները կոչվում են նախադասության երկրորդական անդամներ:

Կշռադատման փուլ

Նույն ձևով վերլուծության են ենթարկում **«Արսենը խաղում է»** և **«Աննան գիրք է կարդում»** նախադասությունները և պարզում, որ առաջին նախադասությունը կազմված է միայն գլխավոր անդամներից, իսկ երկրորդը՝ գլխավոր անդամներից և մեկ երկրորդական անդամից: Վերլուծված երեք նախադասությունների տվյալները կարող ենք գրել գրատախտակին գծված աղյուսակում և նրա երկու սյունակների համեմատության միջոցով պարզել, որ յուրաքանչյուր նախադասություն անպայման ունի գլխավոր անդամներ, իսկ

երկրորդական անդամներ կարող է ունենալ (ինչպես 1-ին և 3-րդ նախադասությունները), կարող է և չունենալ (ինչպես 2-րդ նախադասությունը):

Գլխավոր անդամներ	Երկրորդական անդամներ
1. Բժիշկը բուժում է	բարի, գազաններին
2. Արսենը խաղում է	_____
3. Աննան կարդում է	գիրք

Այս համեմատությունից կարելի է բխեցնել մի քանի եզրակացություններ.

- **Նախադասությունը կարող է ունենալ գլխավոր և երկրորդական անդամներ,**
- **Նախադասությունը կարող է կազմված լինել միայն գլխավոր անդամներից,**
- **Կարող է ունենալ նաև մեկ և մեկից ավելի երկրորդական անդամներ,**
- **Առանց գլխավոր անդամների նախադասություն չի կարող կազմվել:**

Այնուհետև որոշում ենք, թե **Բարի բժիշկը բուժում էր գազաններին** նախադասության յուրաքանչյուր անդամի ինչ հարց է առաջադրվում: Այստեղ պետք է երեխաներին հասկացնել, որ շարահյուսական հարցերի առաջադրումը միշտ սկսվում է նախադասության գլխավոր անդամներից, այսինքն՝ այն բառերից, որոնք արտահայտում են նախադասության հիմնական միտքը: Այս պահանջից ելնելով՝ հարցադրումը պետք է սկսել **բժիշկը** և **բուժեց** գլխավոր անդամներից. բուժեց ո՞վ (բժիշկը), առանձնացնում ենք **ո՞վ** հարցը. բժիշկը ի՞նչ արեց-(բուժեց), առանձնացնում ենք **ի՞նչ արեց** հարցը. ո՞ր բժիշկը կամ **ինչպիսի՞ բժիշկը**-(բարի), առանձնացնում ենք ինչպիսի՞ կամ ո՞ր հարցը. ո՞ւմ էր բուժում - (գազաններին), առանձնացնում ենք **ո՞ւմ** հարցը: Այսպիսով, պարզվում է, որ նախադասության յուրաքանչյուր անդամ ունի իրեն հատուկ հարցը, որ նախադասության գլխավոր անդամները պատասխանում են **ո՞վ, ի՞նչ (ովքե՞ր, ինչե՞ր), ի՞նչ է անում, ի՞նչ է լինում, ի՞նչ է, ինչպիսի՞ն է** հարցերին, իսկ երկրորդական անդամները՝ **ինչպիսի՞, ո՞ր, ո՞ւր, ե՞րբ, որտե՞ղ, որքա՞ն** հարցերին, որոնց օգնությամբ ճանաչում ենք այդ անդամը, որոշում ենք նրա պաշտոնը այդ նախադասության մեջ:

Վերլուծական-համադրական մեթոդը նպաստում է աշակերտների մտածողական ակտիվության բարձրացմանը. աշակերտները լեզվական նյութը կընկալեն ոչ թե մեխանիկորեն, այլ տարաբնույթ տրամաբանական-մտածողական գործունեության ճանապարհով:

Տնային աշխատանք

1.Բժիշկը վաղուց սովորել էր կենդանիների լեզուն:

Քո կարծիքով՝ որո՞նք են այս նախադասության գլխավոր անդամները:

Ընդգծի՛ր:

2.Շարունակի՛ր:

Ուսուցիչը սովորեցնում է: Զինվորը պաշտպանում է հայրենիքը: Նկարիչը ... :

Այսպիսի մոտեցումն ապահովում է ոչ միայն լեզվական այս խնդրի լուծումը, այլև համեմատությունների, ընդհանրացումների, դիտարկվող երևույթը տարբեր կողմերից ուսումնասիրելու գործողությունների ժամանակ զարգանում են երեխաների մտավոր կարողությունները, լեզվամտածողությունն ու տրամաբանությունը:

Կշռադատման փուլում կատարվող վարժությունները ամրակայում են նախադասության մասին ունեցած գիտելիքները:

1.Արտագրի՛ր և ընդգծի՛ր միայն գլխավոր անդամներից կազմված նախադասությունները:

Բանջարեղենի պահեստը անտեր էր մնացել: Պահեստապետ արջը հիվանդացել էր: Որևէ մեկը պիտի փոխարիներ նրան:

2.Յուրաքանչյուր նախադասությունից մեկական բառ հանելով՝ թո՛ղ միայն գլխավոր անդամները:

1. Հացթուխ Ղևոնդը ախորժալի բլիթներ է թխում:
2. Խնձորենու դալար ճյուղերը ճկվել էին բերքի ծանրությունից:

3.Յուրաքանչյուր նկարի շուրջ կազմի՛ր նախադասություն՝ բաղկացած միայն գլխավոր անդամներից: Ապա մեկական բառ ավելացնելով ընդարձակի՛ր այդ նախադասությունը:



4.Առանձնացրո՛ւ առաջադրված նախադասությունների գլխավոր և երկրորդական անդամները:

Վարդանը գնաց դաշտ: Հասմիկը նույնպես գնաց դաշտ: Հասմիկը ծաղիկ էր քաղում:

2.3.Նախադասության գլխավոր անդամների դասավանդումը

Դասի թեման: Ենթակա և ստորոգյալ

Դասի տիպը: Նոր նյութի հաղորդման դաս:

Դասի նպատակը՝

- գիտելիքներ ձեռք կբերեն նախադասության գլխավոր անդամների՝ ենթակայի և ստորոգյալի մասին,
- ձեռք կբերեն համագործակցային կարողություններ:

Դասի ընթացքը

Խթանման փուլ

Պետք է վերցնել մի քանի պարզ համառոտ նախադասություններ, և ավելի լավ կլինի, եթե նախ վերցնենք պարզ ընդարձակ նախադասություններ, և դրանք տրամաբանական վերլուծության ենթարկելու միջոցով լրիվ «բեռնաթափվեն» երկրորդական անդամներից: Ապա վերցնում ենք այս ձևով ստացված մի քանի պարզ համառոտ նախադասություններ: Այս դեպքում երեխաների համար արդեն

որոշակիորեն պարզ է դառնում, որ վերլուծության համար առաջադրվել են միայն գլխավոր անդամներից կազմված նախադասություններ, և մնում է ճանաչել, թե դրանցից ո՛րն է ենթական և ո՛րը՝ ստորոգյալը:

Տալիս ենք չորս նկար-նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ (նկ.1)



(նկ.1)

Երեխաները որոշում են, թե ո՞վ է գրում, ովքե՞ր են նկարում, ի՞նչն է նվագում, ինչե՞րն են քայլում:

Իմաստի ընկալման փուլ

Երեխաները այս հարցերի պատասխանները (աշակերտը, ներկարարները, արջուկը, մկները) գրում են գրատախտակին և ամբողջացնում նախադասությունները:

- Ո՞ր բառն է ցույց տալիս, թե ում մասին է խոսվում նախադասության մեջ (աշակերտի): Ընդգծե՛ք այդ բառը մեկ գծով:

  Առանձին գրե՛ք այդ բառը՝ դիմացը գրելով համապատասխան հարցը:
- Ո՞ր բառն է ցույց տալիս, թե ինչ է անում աշակերտը: Ընդգծե՛ք այդ բառը երկու գծով, առանձնացրե՛ք և դարձյալ դիմացը գրե՛ք համապատասխան հարցը:

Այսպես վերլուծվում է գրված նախադասությունները:

Աշակերտը գրում է:	**Ո՞վ** է գրում:-Արան:
	Աշակերտը **ի՞նչ է անում**:- Գրում է:
Ներկարարները ներկում են:	**Ովքե՞ր** են ներկում:- Ներկարարները:
	Ներկարարները **ի՞նչ են անում:**-Ներկում են:
Արջուկը նվագում է:	**Ի՞նչն** է նվագում:- Արջուկը:
	Արջուկը **ի՞նչ է անում:-** Նվագում է:
Մկները քայլում են:	**Ինչե՞րն** են քայլում: - Մկները:
	Մկներն **ի՞նչ են անում:** - Քայլում են:

Այստեղից եզրակացնում են, որ ենթակային առաջադրվող հարցը տրվում է նախադասության մյուս գլխավոր անդամի՝ ստորոգյալի հետ միասին (**ո՞վ** է գրում, **ովքե՞ր** են ներկում, **ի՞նչն** է նվագում, **ինչե՞րն** են քայլում):

Երեխաները գտնում են այն բառերը, որոնք պատասխանում են ո՞վ, ովքե՞ր, ի՞նչ, ինչե՞ր հարցերին և ընդգծում մեկ գծով: Իսկ այն բառերը, որոնք պատասխանում են ի՞նչ է անում, ի՞նչ են անում հարցերին ընդգծում են երկու գծով:

Այս նախադասությունների շուրջ կատարած նախապատրաստական վարժությունից կարելի է արդեն որոշակի ընդհանրացում կատարել՝ որպես օրինակ բերված նախադասություններում **ո՞վ, ո՞վքեր, ի՞նչն, ինչե՞րն** հարցերին պատասխանող անդամները այդ նախադասությունների ենթականերն են:

Նախադասության այն անդամը, որը ցույց է տալիս գործողություն կատարող առարկան կոչվում է ենթակա:

Այն բառերը, որոնք պատասխանեցին **ի՞նչ է անում, ի՞նչ է լինում** հարցերին ստորոգյալներն են:

Նախադասության այն անդամը, որը ցույց է տալիս, թե ի՞նչ է անում, ի՞նչ է լինում ենթական, կոչվում է ստորոգյալ:

Սակայն այս օրինակներն ամենևին բավական չեն ստորոգյալը որպես շարահյուսական հասկացություն լիարժեք կերպով բնութագրելու համար:

Նախապատրաստական վարժության համար պետք է վերցնել նաև այնպիսի նախադասություններ, որոնց մեջ ստորոգյալն արտահայտում է եղելություն, վիճակ, հատկանիշի վերագրում ենթակային և այլն, որպեսզի ստորոգյալի մասին երեխաների ստացած հասկացությունը հնարավորին չափ լայն ու ամբողջական լինի, պատկերացում տա ստորոգյալի այլ հատկանիշների մասին, որին կանրադառնանք հաջորդիվ:

Կշռադատման փուլ

Կազմակերպում ենք խմբային աշխատանք, դասարանը բաժանում 5 խմբի, յուրաքանչյուր խմբում՝ 5 աշակերտ: Խմբերում ընդգրկվում են ուժեղ, միջին և

թույլ սովորողներ: Ամեն խմբի տրվում է թղթի վրա գրված առաջադրանքների խումբ: Յուրաքանչյուր խումբ ինքն է ընտրում իր խմբի ավագին:

Օրինակ: **Գտե՛ք ենթականերն ու ստորոգյալները:**

Արևը հասել էր զենիթին: Սեթը հուսահատ նայեց կողքին դրված դույլի մեջ: Այնտեղ ծուլորեն լողում էր նրա բռնած միակ ձուկը: Այս «հսկային» նա բռնել էր դեռևս լուսադեմին: Գուցե ձկները թաքնվել են լճի խորքերու՞մ:

Յուրաքանչյուր խմբի ավագ կներկայցնի կատարված աշխատանքը, որով գնահատվում է ամբողջ խումբը:

Այսպիսով՝ երեխաներն ամփոփում են.

- ենթական նախադասության այն գլխավոր անդամն է, որի մասին խոսվում է նախադասության մեջ.
- ենթական նախադասության գործողություն կատարող անդամն է.
- ենթական մեծ մասամբ արտահայտված է լինում «առարկա» ցույց տվող բառով և պատասխանում է **ո՞վ , ովքե՞ր, ի՞նչ, ինչե՞ր** հարցերին.
- ստորոգյալը նախադասության այն գլխավոր անդամն է, որը ցույց է տալիս, թե նախադասության մեջ ինչ է ասվում ենթակայի մասին.
- ստորոգյալը մտքով կապված է ենթակայի հետ.ստորոգյալը պատասխանում է **ի՞նչ է անում, ի՞նչ է լինում, ի՞նչ** կամ **ինչպիսի՞ն է** ենթական:

Համագործակցային ուսուցումը նպաստում է ուսման արդյունավետության բարձրացմանը: Աշակերտները, միմյանց օգնելով, իրար հետ մտքեր փոխանակելով, սովորելու մեջ միմյանց ոգևորելով, ոչ միայն ձեռք են բերում վարքային հմտություններ, այլ նաև անմիջականորեն խթանում են միմյանց ուսումնառությանը:

Կշռադատման փուլի գործնական աշխատանքներ՝

1.Ոզնին վազում է:

Այս նախադասությունը կարելի է պատկերել այսպես.

Ոզնին	վազում	է

:

Կազմի՛ր նախադասություններ ըստ այս գծապատկերի:

	ոզնին	վազում է		:

2.Արտագրե՛ք, փակագծերում գրե՛ք ենթականերին տրվող հարցերը:

Մարգագետիններում չորանում է (...) խոտը: Ծառերից թափվուն են (...) տերևները:

3.Յուրաքանչյուր նախադասության մեջ հարցի փոխարեն դի՛ր համապատասխան ենթակա:

1. Առավոտ ծեգին (ինչը) իր զիլ կանչով արթնացնում է տնեցիներին:
2. (Ո՞վ) բուժեց Լևոնի հիվանդ ատամը:

4.Գտի՛ր յուրաքանչյուր նախադասության ենթական ու ստորոգյալը և որոշի՛ր նրանց առաջադրվող հարցերը:

1. Պարուհին իր նազելի պարով հիացրեց բոլորին:
2. Արփինեն անհամբեր սպասում է ձմեռային արձակուրդներին:

Օրինակ՝ Խիզախ հրշեջները հանգցրին հրդեհը:

Ովքե՞ր հանգցրին:-Հրշեջները:

Հրշեջները ի՞նչ արեցին:-Հանգցրին:

5.Գտի՛ր բառերի համապատասխան զույգեր և կազմի՛ր նախադաություններ՝ օգտագործելով դրանք որպես ենթակա և ստորոգյալ:

փուշ	դայլայլել
ուղղաթիռ	ծլվլալ
սոխակ	հրամայել
ճնճղուկներ	թռչել
արքա	ծակել

Օրինակ՝ **Վարդի փուշը ծակեց** տղայի ձեռքը:

Եզրակացություն

1.Տարրական դպրոցը միայն գիտելիքների ձեռքբերման օղակ չէ. գիտելիքն այս փուլում դիտարկվում է որպես զարգացման միջոց:

2. Տարրական դպրոցում կարևորվում է ոչ թե գիտելիքի մեծ ծավալի հաղորդումը, այլ դրա՝ սովորողների կողմից յուրացման ձևերը, գործածման արդյունավետությունը հետագա գործունեության ծավալման և բարձրագույն մտածողության համար պիտանիությունը:

3.Մայրենի լեզվի ուսուցումը տարրական դպրոցում ունի գործնական բնույթ, այն ուսուցանվում է աշակերտների գրավոր և բանավոր գրագետ խոսք կառուցելու, որպես բանալի օգտագործելու, այլ առարկաներից գիտելիքներ ձեռք բերելու համար:

4. Տարրական դասարաններում մայրենիի ուսուցման բովանդակությունը, մեթոդները ու միջոցներն անհրաժեշտ է համապատասխանեցնել կրտսեր դպրոցականների ստեղծագործական, մտավոր գործունեություն ծավալելու կարողությունների ձևավորման նպատակներին:

5.Աշակերտի հաղորդակցական կարողությունների ձևավորման և զարգացման հարցում կարևոր դեր ունեն շարահյուսական գիտելիքները: Շարահյուսական գիտելիքների հիմքն ու բանալին նախադասությունն է:

6. «Նախադասություն» թեմայի դասավանդումը ընթանում է միասնացված ուսուցման պայմաններում՝ գրական ստեղծագործության տեքստերի վրա: Հանձնարարելի է օժանդակ ձեռնակների գործածությունը:

7.ՈՒսուցման հաջողությունը մեծապես կախված է դասավանդման մեթոդների ճիշտ ընտրությունից: Արդյունավետ է այն դասը, որտեղ ներդաշնակորեն համադրված են ավանդական և նորագույն մեթոդ- հնարները:

Գրականություն

1. Տեր-Գրիգորյան Ա. Ե, Հայոց լեզվի մեթոդիկա «Լույս» հրատարակչություն, Եր., 1980:
2. Գյուլամիրյան Ջ. Հ., Խոսքի զարգացում, «Լույս» հրատարակչություն, Եր., 2004:
3. Աբրահամյան Ս.Գ., Առաքելյան Վ.Դ., Քոսոյան Վ.Ա., Հայոց լեզու, Շարահյուսություն, «Լույս» հրատարակչություն, Եր., 1975:
4. Բաղիկյան Խ.Գ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսության տեսության և գործնական աշխատանքների ուսումնական ձեռնարկ, «Լույս» հրատարակչություն, Եր., 2008:
5. Սարգսյան Վ. Ա., Ուսուցչի ձեռնարկ, «Լույս» հրատարակչություն, Եր., 2017:
6. Ավագյան Մ., Պատկերազարդ քերականություն, «Լույս» հրատարակչություն Եր., 1997:
7. Նախաշավիղ 1-10, Գլխավոր խմբագիր՝ Կարինե Թորոսյան, Գիտամեթոդական հանդես, «Լույս» հրատարակչություն, Եր., 2011:
8. Նախաշավիղ 1-8, Գիտամեթոդական հանդես, Թորոսյան Կ., «Լույս» հրատարակչություն, Եր., 2012:
9. Գյուլամիրյան Ջ. Հ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, «Լույս» հրատարակչություն, Եր., 2006:
10. Ջուհարյան Թ. Գ., Հայոց լեզուն 3-րդ դասարանում (մեթոդական ուղեցույց), «Լույս» հրատարակչություն, Եր., 1979:
11. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Քերականության մեթոդիկա, «Լույս» հրատարակչություն, Եր., 1977:
12. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Մայրենի, Ուսուցչի ձեռնարկ 2-4, «Լույս» հրատարակչություն, Եր., 2011:
13. Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, «Լույս» հրատարակչություն, Եր., 2021:
14. Սարգսյան Վ. Ա., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., Մայրենի դասագիրք 1-4, «Լույս» հրատարակչություն, Եր., 2020:
15. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Հայոց լեզուն տարրական դասարաններում. Մեթոդական հարցեր, Եր., «Լույս», 1988.:
16. Բահաթրյան Ա., Մայրենի լեզվի ուսուցումը, նախապատվություն, Հայ մանկավարժներ, 19-րդ դար, Գիրք 2-րդ, Եր., 1961, էջ 290-301:
17. Աղայան Ղ., Մանկավարժական երկեր, հ. 4, Եր., Հայպետհրատ, 1963, 164, 193էջ:
18. 9. Выготский Л.С. Педагогическая психология.